LOS ANGELES UNIFIED SCHOOL DISTRICT
REFERENCE GUIDE

ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ ԱՂԵՏԻ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՄԱՐ

(School Letterhead)

(Date)

Հարգելի ծնող(ներ)՝

Մեր դպրոցի անվտանգության կոմիտեն աշխատում է երկրաշարժի կամ այլ աղետի դեպքերին նախապատրաստվելու համար:

Աղետի դեպքում մեզ կարող է անհրաժեշտ լինել մի քանի օր խնամել ձեր երեխային, եթե չկարողանաք հասնել դպրոց: Կարևոր է ձեռքի տակ ունենալ արաջին անհրաժեշտության պարագաներ: Մենք խնդրում ենք, որ յուրաքանչյուր երեխա բերի թափանցիկ, ամուր, 1 գալոնանոց, պլաստիկ, կայծակաճարմանդով տոպրակ, որը պարունակում է սնունդ արտակարգ իրավիճակների համար (երկար պահպանման ժամկետով) և այլ պարագաներ: Առաջարկվող տարրերը ներառում են.

1. **Սնունդ -** Խնդրում ենք օգտագործել պահածոյացված և կափարիչով փակված մթերքներ (դրանք չեն գրավում կրծողներին կամ միջատներին): Խուսափեք այն մթերքներից, որոնք պահանջում են սառեցում, ջուր, կամ աղի են, կամ որոնք ձեր երեխան չի ուտի: Պատրաստեք բավարար սնունդ երեք օրվա համար:
   - Մրգեր, բանջարեղեն, պուդինգ
   - Հյութեր, ջուր
   - Ջրի մեջ պահածոյացված թունա, միս կամ հավ
   - Գդալ, պատառաքաղ, դանակ, թաց և չոր անձեռոցիկներ

2. **Տարբեր առարկաներ**
   - Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ օպտիկական ակնոցներ
   - Ցանկացած դեղամիջոց, որն անհրաժեշտ է 72 ժամվա ընթացքում՝ պիտակավորված երեխայի անունով և հրահանգներով
   - Սիրված խաղալիք, ընտանեկան նկար կամ նախօրոք գրված հոգատար գրառում ընտանիքից

Խնդրում ենք հիշել, որ նաև պատրաստեք ձեր տունը արտակարգ իրավիճակների համար, և արդիական պահեք ձեր կոնտակտային տվյալները դպրոցում: Դուք կարող եք ստանալ արտակարգ իրավիճակներին նախապատրաստման մասին ավելի շատ նյութեր Արտակարգ իրավիճակների կառավարման գրասենյակի այս կայքում. https://www.lausd.org/Page/2751:

Խնդրում ենք լրացնել տեղեկատվությունը այս նամակի հետևի մասում և ներկայացնել ձեր երեխայի արտակարգ իրավիճակների փաթեթի հետ միասին: Շնորհակալություն ուշադրության և աջակցության համար:

(Principal signature line)

LOS ANGELES UNIFIED SCHOOL DISTRICT
REFERENCE GUIDE

Խնդրում ենք ներառել այս տեղեկատվությունը ձեր արտակարգ իրավիճակների փաթեթ(ներ)ում՝

Աշակերտի անուն, ազգանուն _____ Դասարան _____ Սենյակ № _____

Տան հասցե_____

Բջջ./Հեռախոս ( ) _____ Այլ հեռ. ( ) _____

Բժշկական տեղեկատվություն՝ ալերգիա, դեղորայք և այլն _____

_____

Արտակարգ իրավիճակների կոնտակտ նահանգից դուրս՝

Անուն / Հարաբերություն _____ Հեռախոս ( ) _____